

Նորայր Աղայան

ՉԻՆԱՑԻՆ

Նա մոր ու հոր կողմից զտարյուն հայ էր, անունը՝ Գրիգոր, որ գալիս էր Սուրբ Գրիգոր Լուսավորչից, մի կարճ ժամանակ թունավոր օձերով ու կարիճներով լի էր Վիրապուն բանտարկված՝ քրիստոնեության լույսն անհավատների մեջ տարածելու համար: Նրա մոտիկ ու հեռավոր հարազատարյունակից շառավիղներում չկար և ոչ մի այլազգի, և ոչ մի այլադավան, բոլորն ուղն ու ծուծով հայ էին, բնիկ, լեզուն հայերեն, աչք-ունքը վահագնյան, ժպիտը, լացը, մենակությունը, տխրությունը, հույսը, ուրախությունը, սուգն ու առող- հիասքանչ գժությունը: Նա այնքան հայ էր, որ մնացած հայերը նրան նույնիսկ նախանձում էին՝ ինչո՞ւ իրենք էլ այդքան Գրիգոր չեն: Սակայն, պատահեց, մի կիրակի շոգ օր, երբ բակում նարդի էին խաղում, նա, իր շեշ-բեշի վրա, ասաց.

-Անցած գիշեր երազումս չինացի տեսա:

Հակառակորդը, որ խաղը տարվում էր, զառերը նյարդայնորեն սեղմեց բռում.

-Ի՞նչ տեսար...

-Չինացի:

Ներկաները շփոթված նայեցին իրար:

-Գուցե ռո՞ւս է եղել, -ասաց նրանցից մեկը:

-Չէ,-ասաց Գրիգորը,- հիմա էլ տեսնում եմ, մաքուր չինացի է:

-Այ տղա..., -մեղադրական լսվեց մեկ ուրիշ ձայն:

-Դու հայ չես,- հայիոյելու պես բղավեց հակառակորդը,-ես չինացու հետ նարդի խաղացող չեմ,-և զառերը բարկացած նետեց սաղափե խաղատախտակին:

-Կարծում ես մենք կխաղա՞նք..., -միաձայնեցին հարևանները:

Այդ ընթացքում նրա անունը եղավ Չինացի՝ Գրիգորի փոխարեն, և շուտով տարածվեց ամբողջ բակում, մերձակա փողոցներում, քաղաքում, որտեղ նա փոստատարի իր աշխատանքի բերումով հաճախ էր անցուդարձ անում: «Չինացին ուշացավ: Ես երկու-երեք օրը Չինացին չի երևում, մեռե՞լ է: Չինացու հերն անիծած: Չինացին փորձանք դարձավ մեր գլխին»:

Գրիգորն ամեն օր ու ժամ մարտնչում էր իր իսկական անունը հանրության աչքում վերահաստատելու համար: Ջուր ջանքեր: Չինացին ավելի ու առավել էր դաջվում նրան: Աստիճանաբար նա հաշտվեց իր այդ արքայի վիճակին և ի վերջո հավատաց կամ նրան թվաց, թե հավատում է, որ ինքը Գրիգոր չէ, այլ հենց Չինացի:

Երբ սկսվեց մեծ արտագաղթը, մի առավոտ Գրիգորը ելավ տնից ու տարտամորեն քայլեց դեպի օդակայան: Նա կորցրել էր աշխատանքը, գործազուրկ դարձել, Ազգային ժողովի ընտրություններում իշխանությունն ավաճած կուսակցություններից մեկը Գրիգորին վճռել և նրա փողոցներում փոստատար էր կարգել իր կուսակցականին: Քայլում էր և մտածում՝ ո՞ւր եմ գնում, ինչո՞ւ, գնո՞ւմ եմ, թե՞ կանգնած եմ: Անարգել անցավ օդակայանի հսկիչ կետերով՝ առանց տոմս ու անձնագիր ցույց տալու, տոմս չունեմ, բայց անձնագիրը գրպանում էր, միայն այնտեղ էր գրված՝ Գրիգոր, ազգանուն,

ծննդյան թիվ, հայ, քաղաք, հասցե, լուսանկարն էլ ինքն էր: Վերջին կետում, մեկ էլ, պաշտոնյան նրան կանգնեցրեց.

-Անձնագիրդ...

Պաշտոնյան երկար դիտում էր անձնագրի լուսանկարը և սևեռուն աչքերով համեմատում բնորդի հետ.

-Ոնց որ չինացի լինես:

-Չինացի եմ:

-Ո՞ւր ես գնում:

-Գնում եմ:

-Գնում ես գնա, էլ հետ չգաս, ձեզնից ձանձրացանք:

Բազմաթիվ օդանավերի շարժասանդուղքների մոտ ժողովուրդ էր խռնված, որ հրմշտվում էր վեր ու ներս: Գրիգորի համար միևնույնն էր որ օդանավը խցկվել, ուր ուզում է թռչի՝ Մոսկվա, Բեյրութ, Փարիզ, Լոս Անջելես, Լոնդոն, Կահիրե, Չալեպ... Եւ հիշեց բոլոր այն քաղաքների անունները, որտեղից մինչև վերջերս նամակներ ու փաթեթներ էր ստանում և բաժանում հասցեատերերին:

Թռիչքի երկրորդ ժամին ռուսի ու չինացու խառնուրդ դեմքով մատուցողուհին նախաճաշ բերեց՝ հաց, պանիր, երշիկ: Ավելի համեղ ու կշատացնող էր ճաշը: Եվ Գրիգորը մտածեց՝ ճիշտ եմ նստել, լավ երկիր եմ գնում:

Երեկոյան կողմ օդանավը սահուն վայրէջք կատարեց: Օտար հողում Գրիգորն իմացավ, որ գտնվում է Չինաստանի Շանհայ քաղաքում:

(Բնակչությունը՝ 20 միլիոն մարդ, Յանցզիի աջ վտակ Յուանպուի ափին-ծանոթագրությունը՝ պատմվածքի հեղինակի):

Գիշերը հսկայական քաղաքը խոր քուն մտավ: Փողոցները դատարկվեցին: Գրիգոր-Չինացին որոշ ժամանակ այս ու այն կողմ էր քայլում, չգիտեր հաջորդ քայլերն ուր անել, անե՞լ, թե՞ չանել, ի վերջո պագեց մի պատի տակ և ավելի խոր ու մեռած քնեց, քան Շանհայը: Երազ տեսավ՝ իր հարազատ բակը, կին, տղամարդ, երեխա հարևաններին, ցայտաղբյուրը, որից ջուր խմեց, նարդին ու զառերը, որոնք իրեն միշտ հաղթանակ էին բերում,- և այս ամենն օժված կապույտ-ոսկեշող թրթռուն գույներով:

Եւ աջ թե ձախ ուսին ծանր հարված զգաց, անմիջապես էլ՝ ապտակ դեմքին: Բացեց աչքերը: Օրը լուսանում էր: Առջևը՝ ոտքերը չռած ոստիկան:

-Թափառաշրջի՞կ...

-Չինացի,-քնաթաթախ ասաց Գրիգորը:

-Չինացի թափառաշրջիկ...

-Փոստատար,-ասաց Գրիգորը,-երևան-Շանհայ...

Ոստիկանը նրա ձեռքերը ետև շղթայած տարավ ոստիկանատուն: Մեկ ուրիշ ոստիկան նրան ծեծեց: Երրորդ ոստիկանը նրան կերակրեց խաշած բրնձի ու սոյայի լափով, որ շատ տաք էր ու աղի: Չորրորդ ոստիկանը նրան այնքան ծեծեց, որ նա փսխեց ամբողջ կերածն ու չկերածը: Հինգերորդ ոստիկանը արձակեց նրա ձեռնաշղթան, հրեց մի կիսամուկ խուց և հրամայեց քնել:

Գրիգորը, որն այս պատմվածքի հեղինակի համար է Գրիգոր, իսկ ամբողջ աշխարհի աչքում՝ Չինացի, արթնացավ երկու օր հետո՝ մեծ ուրախություն պատճառելով ոստիկաններին, որոնք կարծում էին նա մեռած է և արդեն պատրաստվում էին լացուկոծով թաղել:

-Զինացի, չէ՞...

-Զինացի,-հաստատեց Գրիգորը:

-Մաքուր չինացի, չէ՞, կոնֆուցիական...

-Մաքուր,-հաստատեց Գրիգորը:

-Որտե՞ղ էիր մինչև այժմ, հայրենակից...,-ուստիկանները Գրիգորին միահամուռ այնպես ամուր գրկեցին, սեղմեցին իրենց, որ նա քիչ էր մնում շունչը փչեր:

Շուտով, թե՞ հաջորդ իսկ օրը, նա նշանակվեց ոստիկանատան փողոցի հավաքարար: Առավոտից երեկո երկարակոթ ցախավելով ավլում էր փողոցի հանդիպակաց մայթերը տասնյակ հազարավոր անցորդների աղբից: Երբեմն էլ անցնում էր հարևան փողոցները: Հիանալի էր աշխատում, մի այնպիսի սիրով ու պատասխանատվությամբ, որ թվում էր ոչ թե օտար երկրի, օտար քաղաքի, օտար փողոցի աղբն է հավաքում, այլ՝ իր հեռու-հարազատ հայրենիքի: Ինչ իմանաս, մարդու հոգին խորն է ու անընթեռնելի, գուցե հենց այդպես էլ կար:

Մի պայծառ-արևաշող օր, ճակատագի՞ր էր, հազար տարին մեկ անգամ պատահող դիպված՝ նրա ցախավելի բերանը սպիտակ պայուսակ ընկավ, ճարմանդը բացվեց և պարունակությունը թափփեց մայթին: Կանացի շպարանքի պարագաներ էին: Նա ծնկի եկավ, չորեքթաթ հավաքեց իրերը և տեղավորեց պայուսակում: Նրա աչքերը հանդիպեցին իր մոտ կանգնած կանացի նրբակերտ ոտքերին: Դանդաղ-զգուշորեն բարձրացան վեր: Նա տեսավ կնոջ պարմանուհի մարմինը՝ «վարդե ու լուսե խմորված էակ մը»՝ այդ պահին կասեր Գրիգոր Չոհրապը, եթե ներկա գտնվեր, բայց, ցավոք սրտի, ո՛չ ներկա էր, ո՛չ բացակա: Նա շփոթված ոտքի ելավ և պայուսակը մեկնեց անծանոթուհուն: Կինը շնորհակալությամբ ժպտաց: Գրիգոր-Զինացին էլ ժպտաց նրա ժպտին: Լուռ-երկար ժպտում էին: Ասես նրանց հոգին էր ժպտում:

-Զինուհի՞...,-հարցրեց Գրիգորը:

-Այո:

-Ես էլ եմ չին,-ասաց Գրիգորը:

-Տեսնում եմ:

Ոչ մեկը մյուսի բառը չգիտեր, բայց հասկացան իրար, որովհետև շարունակում էին ժպտալ:

-Ինձ կսիրե՞ս,-հարցրեց կինը:

Գրիգորի աչքերը դրական բառ շնջացին իրենց արդեն հարազատ ժպիտ լեզվով:

-Գնանք,-ասաց կինը:

Գրիգորը երկար կոթով ցախավելը դրեց աղյուսե պատի տակ և քայլեց կնոջ ետևից, հետո՝ կողքից, ապա՝ առջևից, կարծես ոչ թե կինն էր նրան իր տուն տանում, այլ նա՝ կնոջը իր չեղած կացարանը:

Ոստիկանատան փողոցում այլևս ոչ ոք նրան չտեսավ: Ոստիկաններն անհանգստացան՝ ո՞ր է մեր Զինացին, ի՞նչ եղավ, ինչո՞ւ նրան փորձանք-մահ չպատահե՞ց: Շատ որոնեցին, ամեն կողմ, ամեն տեղ, նույնիսկ՝ ուրիշ քաղաքներում ու նահանգներում, բայց չգտան: Եվ հնարավոր էլ չէր միլիարդանոց Զինաստանում գտնել իրենց որոնած Զինացուն, դա նույնիսկ ամենագետ Կուն Ցզիի կարողություններից վեր էր:

Նրանք հիանալի մեղրամիս անցկացրին Շանհայի հյուսիս-արևմտյան արվարձանի մի համեստ տան մեջ, որտեղ ապրում էր Ցին Չժան: Իրար լեզու չէին հասկանում և հաղորդակցվում էին միայն ջերմագին սիրո լեզվով, որի հասկանալիության հետ չէր կարող մրցել աշխարհում և ոչ մի գրավոր թե բանավոր լեզու, մինչև իսկ` Ջամենհոֆի և նրա ժառանգ Գուրգեն Սևակի էսպերանտոն

Անցավ մի ամբողջ տարի: Ոչ Ցինն էր փորձում հայերեն սովորել և ոչ էլ Գրիգորը` չինարեն: Դրա անհրաժեշտությունն ամենևին չկար, բավական էր մեկնումեկը ժպտար սրտալից ժպիտով` ամեն ինչ հասկանալի էր դառնում ավելի, քան պետք էր այս կյանքում:

Գրիգորը երազում հաճախ տեսնում էր իր ծննդավայր քաղաքը և տխրում էր:

-Կարոտել եմ,- մի օր նա տխուր ժպտաց կնոջը: Ցին Չժանն էլ տխուր ժպտաց, կարծես նա էլ էր կարոտել այն, ինչ չէր տեսել երբեք:

Նրանք Շանհայ-Երևան չվերթի երկու տոնս գնեցին: Օդում Ցինը շատ հուզված էր, թվում էր` նա ավելի անհամբերությամբ է սպասում Երևանի հետ հանդիպմանը, քան Գրիգորը, թեև այս մտադրույթը դժվար է ապացուցել ավանդապահ ընթերցողին:

Օդակայանի այն նույն հսկիչ պաշտոնյան, որ անցած մեկ տարում բավականին նիհարել էր, նրանց կոպտորեն կանգնեցրեց.

-Եկա՞ր...սա ո՞վ է:

-Ցին Չժան,-ասաց Գրիգորը:

-Մի չինացին ինձ քիչ էր, հա՞, հիմա էլ երկուսդ եք: Եկել ես սրա հետ մնա՞ս:

-Չգիտեմ,-ասաց Գրիգորը:

-Թե մնալու եք, ներս չեմ թողնի:

-Կզնանք, ազնիվ խոսք:

-Հիմա ազնիվ խոսքին փող տվող չկա, հատկապես չինացու, իտալացու, անգլիացու, ամերիկացու...

-Ազնիվ հայի խոսք:

-Մանավանդ դա գռռչ չարժի:

-Հորս գերեզման,-ասաց Գրիգորը:

-Հավատացի, անցեք:

Գրիգորը գրպանից հանեց տան բանալին, որ հետը Չինաստան էր տարել, և, դուռը բացելով, կնոջը ներս հրավիրեց: Գորովալից շոյում էր բնակարանի պատերը, փոշոտված կահ-կարասին, դռներն ու լուսամուտները և լուռ արտասվում: Ցինի աչքերն էլ էին թրջվել, կարծես այդ միջավայրում ապրել էր իր մանկությունը, պատանեկությունն ու երիտասարդությունը:

Չին կնոջ հետ Գրիգորի վերադարձը տակնուվրա ցնցեց ամբողջ բակն ու կողքի փողոցները, չհավատացին, հավատացին, չհավատացին և վազեցին նրանց տուն` լսածն աչքով տեսնելու: Այն ինչ տեսան` առավել ցնցող էր. Գրիգորը` չինացի, Ցին Չժան` մաքուր չին, երկուսով` Չինաստան, երկուսով` մեկ միլիարդից ավելի ժողովուրդ: «Խեղճ հայ ճողովուրդ, որ ընդամենը մի նիհար բուռ ես»,-անցավ մի քանիսի մտքով: Տղամարդիկ խամոթեցին Գրիգորին, որ չին կին ունի, ինչո՞ւ իրենց կանայք էլ չին չեն, իրենք այդ նախկին ողորմելի փոստատարից ինչո՞վ են պակաս: Եվ ստորաբար ատեցին իրենց կանանց, որոնք ոչ մի մեղք չունեին, որ չին չեն, այլ` հայ: Մի կին էլ

մտքում ամուսնուն ատեց, որ հայ է, զգվեց նրանից, հիասթափվեց ու սիրահարվեց Գրիգոր Չնացուն և գաղտնի նրա անկողինը մտավ: Եվ անմիջապես էլ, ասես օձից խայթված, վեր թռավ անկողնուց՝ ամոթից կասկարմիր: Գրիգորին թաքուն ու բացահայտ թշնամացողներ էլ եղան՝ «ես քու չինացի մերը...»: Բայց Գրիգորը նրանց այդ վերաբերմունքը չզգաց, որովհետև նրանք կարողանում էին տաղանդավոր դերասանություն անել, քողարկելով իրենց իսկական էությունն ու ենթատեքստը: Հատկապես կեղծ սիրալիրություն էր խաղում Բենոն, նույնիսկ չարամտորեն, տռփագին գրկեց-համբուրեց Ցին Չժանին՝ «Իմ գեղեցկուհի հարս»: Դրանով Բենոն Գրիգորից վրեժ էր լուծում՝ նարդու խաղում իր պարտությունների համար:

Գրիգորն ու Ցինը ոնց անակնկալ հայտնվել էին, այնպես էլ, մի օր, աննկատ հեռացան Երևանից: Երկուսին էլ թվաց՝ աշխարհից են հեռանում:

Ինչպես հեքիաթներում, այստեղ էլ անցան շատ տարիներ: Նրանք որդի ունեցան: Հայր Գրիգորը նրան անվանակոչեց Գրիգոր, որ իր անունը մարդկությունից չանհետանա: Ցին Չժան շատ հավանեց այդ անունը, ժպտաց՝ ի՞նչ գեղեցիկ անուն է, որտե՞ղ գտար:

Գրիգոր երկրորդը հանճար էր ծնվել ու մեծանում: Մեր տղան հանճար է, հանճախ ժպտում և հպարտանում էր Ցինը: Հայի ու չինուհու սիրուց միայն հանճար է ծնվում, ժպտում էր Գրիգորը հայրական երջանկությամբ: Բայց մի անգամ էլ տխրեց ու չժպտաց: Քաղցր մի դող լռելյայն անցավ սրտով. հայի և հայուհու սիրուց կարող էր ավելի մեծ-տիեզերական հանճար աշխարհ գալ:

Արդեն 15 տարեկանում Գրիգոր երկրորդը լուծում էր մաթեմատիկական չափազանց բարդ խնդիրներ, զարմանք պատճառելով նշանավոր մաթեմատիկոսներին: Նրա լուսանկարն ու բանաձևումները տեղ էին գտնում «Ժենմին Ժիբաո», «Գուևժեն Ժիբաո», «Վենիուեյ բաո» կենտրոնական թերթերում և բազմաթիվ գիտական հանդեսներում: Նրան հրավիրեցին Շանհայի պետական համալսարան՝ լուսաբանելու մաթեմատիկայի մութ ու կնճռոտ հարցերը, այստեղ ավելի շատ դասախոսներ էին ներկա գտնվում, քան՝ ուսանողներ, գալիս էին նաև ամենատարբեր ասպարեզների մարդիկ՝ արվեստագետներից մինչև քաղաքական գործիչը: (Ինձ թվում է ես էլ եմ մեկ-երկու անգամ ունկնդիր եղել-հեղինակ):

Մի օր հայրն ասաց որդուն. տղաս, դու արդեն մեծ մարդ ես, բայց քո մեծությունն արժեք չի ունենա, եթե սեփական աչքերով, սեփական սիրտ ու հոգով չտեսնես իմ հայրենիքը, որը նաև քոնն է, մեր հայրենիք թշվառ-անտեր...Գնա, նայիր չորս կողմ, ճանաչիր...կգաս ինձ կպատմես...

Երևանի օդակայանում պաշտոնյան կանգնեցրեց Գրիգոր երկրորդին.

-Չի՞ն...

-Հայչին, չինհայ:

-Եկել ես մնա՞ս:

-Եկել եմ գնամ:

-Չեմ հավատում, երդվիր:

-Հորս արև:

-Ասա հորս գերեզման:

-Հայրս ողջ է:

-Մի օր կմեռնի, դու ասա:

Գրիգոր երկրորդը այդ երդումը չարեց, սակայն պաշտոնյային թվաց, թե արել է:

«Շատ հետաքրքիր երկիր է երկիրդ, հայր,-մի քանի ամսից նա նամակ գրեց հորը: -Բոլոր մարդիկ՝ քո հայրենակիցները, հերոս են, բայց դա մտքներով էլ չի անցնում, որովհետև նրանց մտքում ամբողջ օրը միայն մի բան կա՝ ինչ անել, ինչպես ապրել այդ ու հաջորդ օրը: Հայր, մի բան ասեմ, բայց մայրիկին չասես, դու ավելի երջանիկ ես, քան նա, դու հայ ես, իսկ նա՝ չինացի: Ինձ աշխատանքի չընդունեցին, ասացին՝ մեզ մաթեմատիկոս պետք չի, և ընդհանրապես, ասացին՝ մենք թքած ունենք գիտության, արվեստի ու գրականության վրա, գնա բիզնես արա: Ես էլ անում եմ: Ահագին սեփականություն եմ ձեռք բերել օրենքով ու անօրեն, ավելի անօրեն, քան օրենքով, այստեղ օրենքի վրա էլ թքած ունեն, ես էլ արդե թքած ունեմ: Սիրելի հայր, օղակայանի պաշտոնյային խաբեցի, ետ չեմ վերադառնա, դու և մայրիկն այստեղ եկեք: Ամենակարևորը, քո ու իմ երկրում անցումային ժամանակաշրջան է, որը, համոզված եմ, դու էլ համոզված եղիր, երբեք չի անցնելու, աշխարհը կանցնի, մեր անցումայինը կմնա ու կծաղկի, իսկ բիզնեսը, փողը ոչ մի տեղ այնպես չի չաղանում, ինչպես անցումայինում: Եկեք, շուտ եկեք, մեռնեմ ձեզ»:

Հոր մտքով մի սարսափելի կասկածանք անցավ. գուցե տղան մոլորվել է աշխարհի ճանապարհներից, ուրիշ երկիր ընկել, ոչ իր Արարատ երկիրը:

Որդին մի քանի անգամ էլ նույն նամակն ուղարկեց Չինաստանում ապրող ծնողներին, սակայն պատասխան չեկավ:

Չէի՞ն ստացել: Նեղացե՞լ էին հանճարեղ-անառակ որդուց: Մահացե՞լ էին անժամանակ: Ցնդել-անեացե՞լ էին աշխարհի երեսից:

Այս հարցերի պատասխանը պատմվածքի հեղինակը չգիտի: Եթե նույնիսկ իմանար, չէր ասի՝ ընթերցողի երևակայությունը չսահմանափակելու համար:

Նաև՝ երկնքից երեք խնձոր չընկավ: Ամեն մարդ թող որոնի ու գտնի իր խնձորը: Կամ՝ չգտնի: Չէ որ այն, ինչ գտնում ես, մի օր, որքան տխուր վերջաբան, կորցնելու ես: